ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Առկա իրավիճակը և առաջարկվող կարգավորումները

2019 թվականի դեկտեմբերին Չինաստանում բռնկված և կարճ ժամանակահատվածում տարբեր երկրներում տարածված նոր կորոնավիրուսային (COVID-2019) հիվանդությունը (այսուհետ նաև՝ վարակ) 11.03.2020 թվականին Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ճանաչվել է որպես պանդեմիա, քանի որ վարակի աշխարհագրական սահմանները ներառում են աշխարհի երկրների մեծ մասը:

29.03.2020 թվականի դրությամբ այս վարակի հետևանքով հիվանդացած անձանց թիվը աշխարհում հասել է շուրջ 700.000-ի, իսկ մահացությունների թիվը անցել է 33.000-ից[1]:

Հարկ է նշել, որ նշված վարակն ունի արագ տարածման միտումներ, հատկապես վերջին օրերին հիվանդության դեպքերը սրընթաց աճ են արձանագրում՝ ԱՄՆ-ում հասնելով օրական միջինում 15.000 հիվանդացած անձանց, Իտալիայում՝ 6000-ի:

Վիրուսի ինտենսիվ տարածումը հղի է նաև լուրջ տնտեսական հետևանքներով թե՛ միջազգային, թե՛ տեղական մասշտաբով: Համաձայն «Մուդիսի» գնահատումների՝ կորոնավիրուսի տարածվածության առավել հավանական սցենարով Չինաստանի տնտեսական աճը կկրճատվի շուրջ 0.8 տոկոսային կետով,

---

[1]Տեղեկատվությունը փոփոխվող է (29.03.2020թ. 21:00 դրությամբ). https://www.worldometers.info/coronavirus/?fbclid=IwAR2C1JLlaiVta7By86YXhOULc-gzPnZmQz7QIgCKBxC-NABher5a0cuYIC8

իսկ ԱՄՆ տնտեսական աճը կնվազի շուրջ 0.15 տոկոսային կետով[2]: Այնուամենայնիվ, առավել վատատեսական սցենարների ռեալիզացման պայմաններում կորոնավիրուսի տնտեսական հետևանքները կունենան անհամեմատ մեծ չափեր: Համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից ընթացիկ տարվա մարտի 2-ին հրապարակված գնահատումների՝ կորոնավիրուսի տարածման հետևանքներով համաշխարհային տնտեսական աճը կդանդաղի 0.5 տոկոսային կետով, իսկ Չինաստանի աճը՝ 0.8 տոկոսային կետով: Կանխատեսվում է, որ ԵՄ-ի և ԱՄՆ-ի տնտեսական աճերը կդանդեղեն համապատասխանաբար 0.3 և 0.1 տոկոսային կետերով, իսկ Հայաստանի հիմնական առևտրատնտեսական գործընկեր երկրի՝ Ռուսաստանի տնտեսական աճը ակնկալվում է, որ 2020 թվականին կնվազի 0.4 տոկոսային կետով[3]:

Պետությունները կորոնավիրուսի դեմ պայքարի տարբեր ռազմավարություններ են կիրառում, սակայն ընդհանուր առմամբ դրանք երկու հիմնական խմբերի են դասվում: Մասնավորապես, երկրներ, որոնք արտակարգ դրություն և միաժամանակ խիստ արգելքներ են կիրառում, և նրանք, որոնք տեխնոլոգիական լուծումների միջոցով կարողանում են լիակատար հսկողություն սահմանել մարդկանց ֆիզիկական տեղաշարժի նկատմամբ և այդպիսով հնարավոր է դառնում ռիսկի հայտնաբերման ժամանակ նույնականացնել և մեկուսացնել վարակակիրներին և իրենց շփման շրջանակը:

Ներկայումս 10-ից ավել երկրներ, այդ թվում՝ անձնական տվյալների պաշտպանության բավականին բարձր մակարդակ ունեցող եվրոպական երկրները, ևս անմասն չեն մնացել տեխնոլոգիական այս մեթոդին դիմելուց: Մասնավորապես, նման երկրները, այդ թվում՝ ԱՄՆ, Հարավային Կորեա, Իսրայել, Սինգապուր, Ավստրիա, Լեհաստան, Բելգիա, Գերմանիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա, կիրառում

[2] Moody's Analytics (February 2020). "Coronavirus: The Global Economic Threat".
[3] OECD Interim Economic Assessment (March 2020). "Coronavirus: The world economy at risk".

են անձանց հեռախոսները՝ կորոնավիրուսային պանդեմիային հետևելու և դրա զանգվածային տարածումը կանխելու նպատակով:

Եվրոպական միության պետությունները միջոցներ են ձեռնարկել՝ խնդրելով հաղորդակցության օպերատորներին տրամադրելու համապատասխան տվյալներ անձանց տեղաշարժին հետևելու համար: Նշվում է, որ Եվրոպական միությունը գնալու է այն ճանապարհով, ինչ ասիական երկրները՝ օգտագործելով բջջային հեռախոսի տվյալները կորոնավիրուսի տարածմանը հետևելու և կանխարգելման համար[4]: Ավելին, Եվրոպական հանձնաժողովը կոչ է արել կենտրոնացնելու այդ տեղեկատվությունը, որպեսզի հնարավոր լինի Եվրոպական միության մասշտաբով իրականացնելու կախնարգելիչ գործողություններ[5]:

Մեծ Բրիտանիայում անձնական տվյալների պաշպանության իրավասու մարմինը նշել է, որ կառավարությունը կարող է օրինական հիմքերով օգտագործել մարդկանց բջջային հեռախոսի տվյալները՝ մարդկանց շարժը մշտադիտարկելու համար, եթե դա կարող է օգնել կանխարգելել կորոնավիրուսի տարածումը: Նշվել է, որ տվյալների պաշտպանության սկզբունքը խոչընդոտ չի հանդիսանում համաճարակի ընթացքում տվյալների փոխանցման համար[6]:

Հարավային Կորեայում անձանց հեռախոսներին հետևելու միջոցով փետրվարի 11-ին գործարկվել է հանրությանը հասանելի էլեկտրոնային քարտեզ, որի միջոցով քաղաքացիները հնարավորություն են ստանում հետևելու, թե արդյոք իրենք շփում են ունեցել, հանդիպել են փողոցում կամ այլ վայրում վարակակիր անձանց հետ: Ավելին, նշված հավելվածի միջոցով Կառավարությունը զգուշացնում է անձանց, որ իրենք շփում են ունեցել վարակված անձի հետ[7]: Համանման ծրագիր է գործարկվել նաև ԱՄՆ-ում[8]:

---

[4] https://www.rte.ie/news/coronavirus/2020/0325/1126396-mobile-giants-agree-to-share-location-data-with-eu/

[5] https://www.politico.eu/article/coroanvirus-covid19-surveillance-data/

[6] https://www.thetimes.co.uk/article/coronavirus-authorities-can-use-mobile-phone-tracking-0khmg0rmp

[7] https://qz.com/1810651/south-koreans-are-using-smartphone-apps-to-avoid-coronavirus/

[8] https://www.unacast.com/covid19

Որոշ երկրներում էլ գործարկել և կիրառում են տարաբնույթ այլ հավելվածներ, որոնց միջոցով հնարավոր է դառնում նպաստելու կորոնավիրուսի տարածման կանխարգելմանը:

Սինգապուրում 20.03.2020թ.-ին գործարկվել է մի հավելված, որով բացահայտվում են այն անձինք, ովքեր կորոնավիրուսով հիվանդ անձի հետ եղել են մինչև երկու մետր տարածության վրա առնվազն երեսուն րոպեով[9]: Ընդ որում, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը նշել է, որ այս համակարգը նպաստել է վարակի տարածման նվազեցմանը երկրում:

Իսրայելում Առողջապահության նախարարության կողմից մարտի 22-ին գործարկված հավելվածի միջոցով ևս վերահսկվել է կորոնավիրուսով հիվանդ անձանց տեղաշարժը և նրանց հետ շփված շուրջ 400 անձանց հրահանգվել է ինքնամեկուսանալ, ինչպես նաև օգտագործվել են բջջային հեռահաղորդակցության տվյալները[10]:

Համանման հեռախոսային հավելվածներ են գործարկվել նաև Իսպանիայում, Սլովակիայում, Ռումինիայում և Լեհաստանում[11]:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում 29.03.2020 թվականին ժամը 11:00-ի դրությամբ հաստատվել է կորանավիրուսային հիվանդության 424 դեպք, 30 առողջացած և 3 մահվան ելքով, փաստացի բուժում է ստանում 391 պացիենտ[12]: 28.03.2020թ. դրությամբ մեկուսացածների ընդհանուր թիվը գնահատվում է 1000:

Վարակի տարածումը կանխելու նպատակով ՀՀ-ում մարտի 16-ից մինչև ապրիլի 14-ը հայտարարվել է արտակարգ դրության իրավական ռեժիմ:

---

[9] https://www.straitstimes.com/singapore/coronavirus-singapore-develops-smartphone-app-for-efficient-contact-tracing

[10] https://www.gov.il/en/departments/news/22032020_04, https://techcrunch.com/2020/03/18/israel-passes-emergency-law-to-use-mobile-data-for-covid-19-contact-tracing/

[11] https://www.theguardian.com/world/2020/mar/27/watchdog-approves-use-uk-phone-data-if-helps-fight-coronavirus

[12] http://moh.am/#1/2735

Միաժամանակ, համավարակի դինամիկային համահունչ, դրա հետագա տարածումը կանխարգելելու և մահվան ելքով դեպքերը բացառելու նպատակով, մի շարք սահմանափակումներ են կիրառվում, ներառյալ՝ տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու և ֆիզիկական տեղաշարժի նկատմամբ:

Վարակի տարածման ինտենսիվության և արագության գնահատման մոդելավորման արդյունքները ցույց են տալիս, որ համաձայն մեկնարկային սցենարի (այսինքն՝ միջամտությունների և սահմանափակումների բացակայության դեպքում)՝ տարածման արագության գործակիցը (R0), այսինքն՝ թե 1 վարակված անձը քանի հոգու կարող է վարակել, 2.4-2.6 է՝ հաշվարկված Երևանի բնակչության խտության և տեղաշարժման համար: Այս գործակցի պահպանման դեպքում պոտենցիալ վարակակիրների թիվը իր բարձրակետին է հասնում առաջին դեպքի արձանագրումից մոտ 70-80 օր հետո, երբ միաժամանակյա վարակվածների թիվը հասնում է բնակչության 89 տոկոսին, իսկ հոսպիտալացման ենթակա ծանր դեպքերի թիվը՝ հատում է 8200-ի սահմանը: Նման սցենարի դեպքում առողջապահական համակարգը ի վիճակի չէ լինում արդյունավետ կերպով արձագանքել համավարակին ընթացիկ դեպքերը սպասարկելու առումով:

Վարակի դեմ պայքարի համակողմանի ռազմավարությունը պետք է ուղղված լինի տարածման արագության գործակցի հնարավորինս նվազեցմանը, որ այն գոնե փոքր լինի 1-ից, ինչը հնարավորություն կտա առողջապահական համակարգին արձագանքելու հիվանդության բոլոր դեպքերին և խուսափելու մահվան ելքով դեպքերից:

Այս նպատակով, ներկայումս կիրառվող արգելքները բավարար չեն, քանի որ ամենակարևոր խնդիրը ի վերջո վարակակիրների և նրանց շփումների շրջանակի լիարժեք բացահայտումն ու մեկուսացումն է: Միայն այս կերպ հնարավոր կլինի հանրային առողջության ու կյանքի անվտանգության ապահովման ուղղությամբ համակարգված գործողություններ իրականացնել:

Ներկա պահին Հայաստանի Հանրապետությունում վերը քննարկված համակարգերի չկիրառման պայմաններում էականորեն դժվարանում է նոր կորոնավիրուսային վարակ ունեցող անձանց շփման շրջանակը հնարավորինս օպերատիվ և ժամանակի թույլատրելի միջակայքում վերհանելու, անձանց ստուգվելու մասին նախազգուշացնելու և վարակի հետագա տարածումը կանխելու գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսի տարածումը կանխելուն ուղղված թվային համակարգերի ներդրումն անհրաժեշտ է գնահատել արտակարգ դրության ժամանակ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված մասնավոր կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության իրավունքների իրացման և պաշտպանության լույսի ներքո: Այսպես.

Սահմանադրության 31-րդ, 33-րդ, և 34-րդ հոդվածներով նախատեսված են մասնավոր կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության իրավունքները, որոնք կարող են սահմանափակվել պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Նշված իրավունքները երաշխավորված են նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով: Ընդ որում, անդրադառնալով այս իրավունքների սահմանափակման պայմաններին Սահմանադրական դատարանը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել են, որ մասնավոր կյանքի անձեռմխելիության և հաղորդակցության ազատության իրավունքի սահմանափակումները պետք է.

1) նախատեսված լինեն օրենքով,

2) հետապնդեն հասարակական կարգի, առողջության, հանցագործությունների կանխման (. . .), այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակ,

3) գործադրված միջոցները համաչափ լինեն նպատակին հասնելու համար:

Տվյալ դեպքում, ակնհայտ է դառնում, որ գործադրվող միջոցները նախատեսված են օրենքով, հետապնդում են քաղաքացիների առողջությունը պահպանելու նպատակ և համաչափ են: Ավելին, Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ արտակարգ դրության ժամանակ այս իրավունքները կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում: Ընդ որում, թե «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 15-րդ, թե «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածով թույլատրվում է արտակարգ դրության ժամանակ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից շեղում:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն, անդրադառնալով «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածով նախատեսված արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու պետության պարտավորությունից շեղումներին, թիվ 29 մեկնաբանությամբ[13] նշել է, որ այդ շեղումները թույլատրելի են, եթե՝

- դրանք կրում են ժամանակավոր բնույթ,
- կիրառվում են երկրում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում,

[13] http://hrlibrary.umn.edu/gencomm/hrc29.html

- կիրառվող միջոցները պահանջվում են արտակարգ դրությունից ելնելով,
- կիրառվող միջոցները խտրական չեն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով կոնվենցիայի 15-րդ հոդվածի մեկնաբանությանը նշել է, որ պետության հայեցողությանն է թողնված ընտրելու այն միջոցները, որոնցով հնարավոր է հաղթահարել արտակարգ դրությունը: Իրավիճակին և հասարակության կարիքներին պետության անմիջական և ուղղակի առնչության ուժով կոնվենցիայի 15-րդ հոդվածը նրան տրամադրում է լայն հայեցողություն կիրառելու միջոցներ[14]: Իհարկե այդ միջոցները չպետք է լինեն անսահմանափակ և պետք է պահանջվեն արտակարգ իրավիճակը հաղթահարելու համար:

Ամփոփելով ամբողջ վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ պանդեմիայի տարածումը կանխելու ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվող քայլերը, թե նշված իրավունքների ընդհանուր սահմանափակումների, թե լրացուցիչ սահմանափակումների առումով թույլատրելի են համարվում, եթե դրանք պայմանավորված են արտակարգ դրությունով և ուղղված են դրա հաղթահարմանը: Հատկանշական է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից Էստոնիան, Լատվիան, Մոլդովան, Վրաստանը և Ռումինիան հայտարարել են եվրոպական կովենցիայի 15-րդ հոդվածը կիրառելու մտադրության և ձեռնարկվելիք քայլերի մասին:

Այսպիսով, նախագծերով առաջարկվում է համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության դեպքում անձնական տվյալների պաշտպանության, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքի սահմանափակումներ՝ անձնական տվյալների մշակման ձևով: Տվյալները մշակվելու են արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի

[14] ECHR, Ireland v. the United Kingdom, § 207

Հանրապետության կառավարության որոշմամբ նշված՝ պետական մարմիններին և պետության կողմից հիմնադրված իրավաբանական անձանց կողմից (տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության անունից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ձևավորման ու ինտեգրման աշխատանքների պատվիրատուի գործառույթներ իրականացնող «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից): Որպես երաշխիք՝ սահմանվել է տվյալները արտակարգ դրությունը դադարելուց հետո ոչնչացնելու պարտականությունը:

Օրենքով նաև երաշխավորվել է, որ արգելվում է հաղորդվող բովանդակության նկատմամբ ցանկացած տեսակի հսկողությունը: Բացի այդ, սահմանվել է, որ օրենքով սահմանված նպատակներից բացի և սահմաններից դուրս կամ սահմանված կարգի խախտմամբ տվյալները մշակելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը, հեռախոսային խոսակցությունը և ձայնային հաղորդագրությունները փոխանցելը, ստանալը, ձայնագրելը կամ դրանց բովանդակությունն այլ ձևով ամրագրելը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով տվյալները չապանձնավորելը և չոչնչացնելը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն: Մասնավորապես՝ նման խախտումները կարող են առաջացնել քրեական պատասխանատվություն՝ անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններն ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու, տարածելու, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելու հիմքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ և 146-րդ հոդվածների հիման վրա:

Միևնույն ժամանակ սահմանվել է ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները և դրանց նկատմամբ հսկողությունը նաև էլեկտրոնային հաղորդակցության միջոցների օգտագործման և կիրառման միջոցով իրականացնելու հնարավորությունը, ընդ որում՝ դրանցով չի կարող

հասանելիություն տրվել անձի մասնավոր և ընտանեկան կյանքի մասին այնպիսի տեղեկությունների և այնպիսի անձնական տվյալների, որոնք նախատեսված չեն օրենքով: Հարկ է նշել, որ էլեկտրոնային հաղորդակցության միջոցների պարտադիր կիրառման դեպքում դրանք չկիրառելը կամ դրանց կիրառման և օգտագործման կարգը խախտելը օրենքի համաձայն համարվելու է արտակարգ դրության ընթացքում ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ռեժիմի խախտում՝ վարչաիրավական և քրեաիրավական իմաստով:

Հարկ է նկատի ունենալ, որ նախագծով առաջարկվում են ոչ միայն կարգավորումներ, որ ուղղված են անձնական տվյալների մշակման իրավունք նախատեսելուն, այլ նաեւ արտակարգ դրության ժամանակ անձնական տվյալների պաշտպանությունն ապահովելուն, քանի որ նման դեպքերում անձնական տվյալների մշակումն անխուսափելի է, իսկ համապատասխան կարգավորման բացակայության պարագայում անձը զրկված է լինում իր տվյալների պաշտպանությունն այդ կանոններին համապատասխան իրականացնելու հնարավորությունից:

2.Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը

Նախագծերով ներդրվող՝ ժամանակակից էլեկտրոնային միջոցների և թվային տեխնոլոգիաների կիրառման միջոցով համաճարակի կանխարգելման նոր մեխանիզմի միջոցով ստացված տվյալների մշակման և վերլուծության հիման վրա հնարավորություն կստեղծվի կանխորոշել և սահմանափակել անձանց տեղաշարժման և շփումների շրջանակը, համաճարակի տարածման ուղղությունները և առավել արդյունավետ հսկողություն իրականացնել անձանց տեղաշարժի սահմանափակման ռեժիմի պահպանման նկատմամբ: Դա կհանգեցնի կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության, օպերատիվության բարձրացմանը, արագ արձագանքման հնարավորությունների մեծացմանը:

Համապատասխան միջոցների կիրառման արդյունքում հնարավոր կլինի վարակի դեմ համակողմանի պայքար մղել՝ իրականացնել վարակակիրների և նրանց շփումների շրջանակի լիարժեք բացահայտում ու մեկուսացում և նպաստել վարակի տարածման արագության գործակցի հնարավորինս նվազեցմանը և հիվանդության բոլոր դեպքերին արձագանքելուն, ինչպես նաև մահվան ելքով դեպքերը հնարավորինս նվազեցնելուն:

Մյուս կողմից, տեխնիկական միջոցների կիրառմամբ հսկողություն իրականացնելու և դրա միջոցով համաճարակի կանխատեսելիությունը բարձրացնելու արդյունքում հնարավոր կլինի աստիճանաբար և՛ մեղմել համընդհանուր ֆիզիկական տեղաշարժման սահմանափակումները, և՛ միաժամանակ իրավիճակը դարձնել կառավարելի և վերահսկելի:

Այսպիսով, առաջարկվող միջոցառումների արդյունքում ակնկալվում է էականորեն նվազեցնել և որպես վերջնարդյունք՝ վերացնել համաճարակի հետևանքով բնակչության կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը և նպաստել անձանց կենսագործունեության բնականոն պայմանների վերականգնմանը:

3. Իրավական ակտի նախագիծը մշակող պատասխանատու մարմինը.

Նախագծերը մշակվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից, այդ թվում՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության մասնակցությամբ: